ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՖԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԸ

Կրոնի և բարոյական օրենքի գիտակցությամբ ամբողջանում է Կաֆկա-մտածողի նկարագիրը: Ավելին, հենց կրոնական գիտակցության մեջ է թաքնված Կաֆկայի ժառանգության կարևորագույն արժեքը՝ հումանիզմը, որը շատ հաճախ մնում է աննկատ:

Այդ գիտակցությունը, բնականաբար, Կաֆկային յուրահատուկ չի եղել ի սկզբանե (թեև այդ գիտակցության հիմքում շատ բան կա, որը հիշեցնում է ազգային՝ հրեական արքետիպերը), այլ նրա հոգևոր զարգացման արգասիքն է և ստեղծագործական հաղթանակներից, թերևս, ամենաթանկը: Դեպի Հոգևոր Մարդը (բնորոշումը Կյերկեգորինն է) Կաֆկայի ընթացքը եղավ չափազանց ծանր և դրամատիկ: Եթե վաղ շրջանի Կաֆկան աչքի է ընկնում բնական կենսախնդությամբ («Ես ընդգծում եմ նորից, - գրում է Մաքս Բրոդը, - որ Կաֆկային բնորոշ էր սերը կյանքի հանդեպ, նա երկրային էր, և նրա կրոնը լիարյուն կյանքն էր...»)[1], ապա հետագա տարիներին սկսվում և ձևավորվում է օրավուր աճող ճգնաժամը: Պրագայի մտավորական բոհեմը, հրեական գետտոն, հակասությունները ընտանիքի հետ, մարմնական ուժերի պակասը և մանավանդ գրական աշխատանքը նրա համար բացում են մի ճանապարհ, որի վերջակետը եղավ գրողի կատարյալ օտարացումը իր միջավայրից: Նա ապրում էր մեկուսի և, իբրև գերմանացված հրեա, որը հավասարապես օտարացված էր ինչպես հրեական, այնպես էլ չեխական մշակույթներից, իրեն զգում էր չափազանց ճնշված: Բայց Կաֆկան ամենից առաջ հենց իր՝ Կաֆկայի ստեղծագործությունն էր: Կենսափորձի պակասը լրացնում են Բլեզ Պասկալն ու Սյորեն Կյերկեգորը:

Կաֆկայի վրա մեծ է հատկապես ազդեցությունը Կյերկեգորի, որը նրա աչքերը բացեց 20-րդ դարի եվրոպացու հոգևոր ամայության վրա: «Այսօր ստացա Կյերկեգորի «Դատավորի գիրքը», -1913թ-ի օգոստոսի 2-ին օրագրում գրառում է Կաֆկան, - ինչպես և ենթադրում էի, չնայած էական տարբերություններին, շատ նման է իմին, բոլոր դեպքերում նա էլ աշխարհի այն կողմում է (ընդգծումը իմն է՝ Ա. Ա.): Իբրև բարեկամ նա օգնեց գտնելու ինքս ինձ...»: Նույն մտածողի մասին Կաֆկան 1918 թ. մարտին գրում է Մաքս Բրոդին. «...նրանից պարզապես այնքան լույս է ճառագում, որ դրա ինչ-որ մաս թափանցում է ցանկացած խորություն»: Այդուամենայնիվ, «Կյերկեգորը մարդուն դնում է ոչնչի առաջ», - ընդգծում է Կարլ Յասպերսը[2]: Հենց այս ոչնչից է սկսվում հասուն շրջանի Կաֆկան, այն Կաֆկան, որը ոչ միայն խոսում է Եվրոպայի հոգևոր մայրամուտի մասին, այլ իր սթափեցնող գրականությամբ փորձում դիմակայել դրան: Այս հանգամանքի մեջ նաև խե-

լագարության մոտեցող մի գիծ կա, որ Կաֆկային, իբրև կերպար, մոտեցնում է Դոն Կիխոտին: Ուշ շրջանի Կաֆկայի մտածողության մեջ աննախադեպ չափով զարգանում է կրոնական գիտակցությունը, որը Թ. Ադորնոն ուղղակի անվանում է աստվածաբանություն (Theologie): Հուսահատության և մարդկանց աշխարհի թշվառության մասին խոսող գրողի գիտակցության մեջ Աստծո գաղափարի առկայությունը թե բնական է և թե պարադոքսալ: Հիվանդ և հուսահատ Կաֆկայի համար Աստծո գաղափարը, թվում է, պետք է դառնար հաշտեցումի հիմք և ստեղծեր այսաշխարհային կյանքի հետ ընդհանրության եզրեր (նման տրամադրություններ են արթնացնում, օրինակ, օրագրային վերջին գրառումները, «Դղյակը» վեպը), ի մի բերեր, դարմաներ, լցներ այն վիթխարի բացը, խզումը, որ կար Կաֆկայի գիտակցության մեջ, նրան հաղորդեր քիչ թե շատ ներդաշնակ բովանդակություն, սակայն հենց կրոնական գիտակցության մեջ Կաֆկան ապրեց ամենածանր հիասթափությունը. 20-րդ դարի եվրոպացու համար, որը անդառնալիորեն կորցրել է կյանքի ամբողջականության հիմքերը, այլևս փակ է Աստծո ճանապարհը: Սա նրա գրականության և կենսափորձի կարևոր եզրահանգումներից մեկն է, որ նրա կրոնական գիտակցությանը հաղորդում է ողբերգական բնույթ, քանզի ավարտին է հասցնում նրա ողբերգական ճգնաժամը և վերջնականապես արձանագրում աստվածային և մարդկային ոլորտների անդնդախոր զանազանությունը (դա Հոբից մինչև Կյերկեգոր ձգվող ճգնաժամի գիծ է):

Կաֆկայի կրոնական գիտակցությունը սկսվում է այնտեղից, որտեղ վերջանում է Հյոլդեռլինինը կամ Նիցշեինը, այսինքն՝ հոգևոր կատարյալ աղետից: Ի տարբերություն Ռիլկեի, որ լսում էր հրեշտակների երգեցողություն կամ Գեորգեի, որ անում էր միստիկ մարգարեություններ, Կաֆկան տեսնում էր կյանքի կեղտը, հասկանում էր ճշմարտությունը, նախազգում էր մարդու անսահման մեղքը և դողում դատաստանից: Այս իմաստով Կաֆկային չափազանց պատշաճում է Նիցշեի մի դատողությունը, որ գտնում ենք «Բարուց և չարից անդին» երկում: «Որպեսզի ...կռահես ու որոշես, - գրքի երրորդ՝ «Կրոնական էությունը» գլխում գրում է փիլիսոփան, - թե ինչպիսին է եղել գիտելիքի և խղճի խնդրի պատմությունը homines religiosi-ի հոգում, դրա համար թերևս պետք է մեկը ինքը այնքան խոր, այնքան խոցված, այնքան ահռելի լինի, ինչպես Պասկալի ինտելեկտուալ խիղճն էր»[3]: Սահմանային իրավիճակները, որոնցում մշտապես գտնվում էր գրողը ինքնաքննության և ինքնաճանաչման ճանապարհին, նրա համար բացեցին այնկողմնայինի վտանգավոր դռները և Աստծուն որպես սահմանային գիտակցության ֆենոմեն: 1921թ. փետրվարի 21-ին նա գրառում է օրագրում. «Պայքարով ձեռք բերված բացասականի հնարավոր ամենաբարձր աստիճանը մոտեցնում է ընտրությունը խելագարության և ապահով կյանքի միջև»: Հետաքրքիր է, որ այս հոգեբանական իրավիճակը չափազանց ճշգրտորեն նկարագրում է Միխայիլ Բախտինը: Ոչ Կաֆկայի, այլ Օգոստինոս Երանելու առիթով նա գրում է. «Մաքուր, միայնակ ինքնահաշվետվություն անհնար է, որքան մոտենում ես այդ սահմանին, այնքան ավելի հստակ է դառնում մյուս սահմանը, մյուս սահմանի ազդեցությունը, որքան խորն է մենակությունը ինքդ քեզ հետ, հետևաբար նաև՝ զղջումն ու ինքնամոռացումը,

այնքան ավելի հստակ և էական է վերաբերմունքը դեպի Աստված»[4]:

Առհասարակ Կաֆկայի ստեղծագործության կրոնական բովանդակությունը ակնհայտ իրողություն է, որի մասին գրում են բազմաթիվ ուսումնասիրողներ՝ Ֆ. Վելչը, Հ. Ժոլիտցերը, Կ. Վագենբախը, Վ. Ռիսը, Վ. Կրաֆտը և հատկապես Մ. Բրոդը: Ինքը Կաֆկան, ևս խոսում է իր գործերի կրոնական միտումների մասին: Ահա օրագրային գրառումներից մեկը. «Այս ամբողջ գրականությունը (խոսքն իր գրականության մասին է՝ Ա. Ա.) հարձակում է սահմանի վրա, և եթե նրան չխանգարեր սիոնիզմը, հեշտությամբ կարող էր վերածվել նոր, գաղտնի ուսմունքի՝ կախարդանքի (Kabbala): Դրա համար նախադրյալներ կային» (16 հունվարի, 1922):

Ժամանակակիցներից և ուսումնասիրողներից ոմանք (Մաքս Բրոդ, Հ. Պոլիտցեր և այլն) Կաֆկայի բնավորության մեջ սրբի գծեր են տեսնում (ի դեպ, Վ. Նաբոկովը համաձայն չէ այս կարծիքին)[5]: Ֆ. Բայսները, օրինակ, գրում է. «Կաֆկան ընդգծված միտում ուներ դեպի ճշմարտությունը և ազնվությունը»[6]: 1920 թ. Միլենա Եսենսկան Մաքս Բրոդին գրում էր. «Նա (Կաֆկան - Ա.Ա.) բացարձակապես անընդունակ է խաբելու, ինչպես որ անընդունակ է հարբելու: Նա ոչ մի տեղ չունի ապաստան ու պատսպարան: Նա կարծես մերկ լինի հագնվածների միջավայրում»[7]: Կաֆկայի նամակներում, «Օրագրերում», աֆորիզմներում իր և գրականության կոչման մասին գտնում ենք դատողություններ, որոնք թաթախված են 20-րդ դարի եվրոպացի գրողի համար ինչ-որ անսովոր պաթոսով, ռոմանտիկ մղումով, որ այլ գրողների պարագայում կարող էին թվալ պարզունակ կամ ոչ անկեղծ, բայց ոչ Կաֆկայի: Դեռևս 1904 թ. նա իր ընկերոջը՝ Օսկար Պոլլակին, գրում է. «Գիրքը պետք է կացին լինի մեր միջի սառած ծովի դեմ»: Օրագրերում խոստովանում է. «...ընտանեկան միջավայրում իմ աչքը բացվեց այս աշխարհի սառն իրականության վրա, ես պարտավոր եմ այն ջերմացնել, ինչը փորձում եմ անել» (19 հունվարի, 1911): 1917 թ. սեպտեմբերի 17-ի գրառումը շատ ավելի որոշակի է. «...բայց երջանիկ կլինեի, եթե կարողանայի աշխարհը բարձրացնել դեպի ճշմարտություն, մաքրություն, մշտնջենականություն» (անկասկած մարդկանց ծառայելու միակ ձևը Կաֆկայի համար գրականությունն էր): Օրագրային մեկ այլ գրառում նույնպես գտնում ենք կարևոր. «Նկարիչ Աշերի առաջ մերկ, իբրև բնորդ պետք է ներկայացնեմ սուրբ Սեբաստիանին» (7 հունվարի, 1913): 103-րդ աֆորիզմում Կաֆկան խոսում է աշխարհի ցավի հանդեպ անտարբեր լինելու անհնարինության մասին: Վերջապես 54-րդ աֆորիզմը ոչ մի կասկած չի թողնում գրողի կողմնորոշումների մասին. «Ոչինչ չկա, բացի հոգևոր աշխարհից: Այն, ինչ մենք անվանում ենք զգացմունքների աշխարհ, չարն է հոգևոր աշխարհում...»: Բայց դրանով ամեն ինչ չի ավարտվում: Կաֆկայի մարդկային և ստեղծագործական նկարագրին յուրահատուկ են նաև ինքնանվաստացման գծեր, որոնք նույնպես կարևոր են քննարկվող խնդրի տեսանկյունից: «Օրագրերը», նամակները պարզապես ողողված են նմանատիպ գրառումներով: Ահա դրանցից մեկը. «Դատարկ սափոր եմ, առայժմ ամբողջական, բայց արդեն փշրվելու ենթակա... Լիքն եմ ստով, ատելությամբ և նախանձով: Լիքն եմ ծուլությամբ, թշվառությամբ, անօգնականությամբ» (6 օգոստոսի, 1914): Մարդկային թշվառության

և ինքնաճանաչման մասին է խոսում նաև Բլեզ Պասկալը, որի կարծիքով դեպի Աստված տանող ճանապարհի առաջին սանդուղքը հենց ինքնաճանաչող մարդն է. «Մարդու մեծությունը անչափելի է, երբ ճանաչում է իր թշվառությունը»[8]:

Կրոնական գիտակցության հանգումը Կաֆկայի համար գոյության փակուղիներից ելքի որոնման տրամաբանական արդյունք է: Դա բնորոշ էր ոչ միայն Կաֆկային, այլև բազմաթիվ այլ գրողների, հատկապես հրեական ծագման: Անընդհատ հարստացող առարկայական աշխարհի միջավայրում, երբ գնալով ավելի ու ավելի էր աղքատանում մարդկային բովանդակությունը, կրոնը և Աստծու գաղափարը կարող էին լրացուցիչ բովանդակություն հաղորդել մարդուն, նրան վերադարձնել կորցրած նկարագիրը: Նրա կրոնական գիտակցության ձևավորումն ու զարգացումը ընթացել են քրիստոնեական, հրեական կրոնների, Աստվածաշնչի, Թալմուդի միջավայրում, քաբբալայի և կրոնափիլիսոփայական այլ ուսմունքների ազդեցության տակ: Օրագրերը, նամակները, ինքնակենսագրական մյուս նյութերն առատ են Սուրբ Գրքից, Թալմուդից մեջբերումներով, հղումներով, առակներով: Կենսագիրները վկայում են, որ հատկապես կյանքի վերջին տարիներին նա կարդում էր Աստվածաշունչ: Աստվածաշնչյան թեմաներով հարուստ են «Օրագրերի» հատկապես 1916թ. գրառումները, երբ գրողն ապրում էր կյանքի դրամատիկ շրջադարձերից մեկը: Այս գրառումներում տեղ են գտել նույնիսկ աղոթքներ, բնագրային առանձին էջերի վրա հեղինակի կողմից արված նկարներ կան, որոնք պատկերում են Աբրահամի՝ Իսահակին զոհաբերելու պատմությունը: «Վերցրու ինձ քո գիրկը, - կարդում ենք աղոթքներից մեկում, - անհուն է քո գիրկը, վերցրու ինձ անհունի մեջ, չես ուզում հիմա, թող լինի հետո»:

Կաֆկան հետաքրքրվել է նաև այլ կրոնների պատմությամբ և գաղափարներով: Գյուստավ Յանաուխի զրույցներում այսպիսի տողեր կան. «Հնդկական կրոնի փաստաթղթերը գրավում են ինձ, բայց միաժամանակ վանում: Դրանց մեջ, ինչպես թմրադեղերում, ինչ-որ ձգող ու երկյուղալի բան կա: Բոլոր այդ յոգերն ու կախարդները նվաճել են բնական կյանքը ոչ թե ազատության հանդեպ կրակոտ սիրով, այլ լուռ, սառն ատելությամբ դեպի կյանքը: Հնդկական կրոնի վարժությունների ակունքը խորագույն պեսիմիզմն է»[9]:

Կաֆկայի կրոնական գիտակցության դրսևորումները լայնորեն սփռված են նրա գործերում: Օրագրերում, նամակներում, աֆորիզմներում և գեղարվեստական երկերում նա մշտապես խոսում է Աստծո դրախտի, նախասկզբնական մեղքի, դրախտից մարդու արտաքսման, Վերադարձի, աստվածայինի ու մարդկայինի սահմանների և բազմաթիվ այլ խնդիրների շուրջ: Դրանց մասին պատկերացումներում Կաֆկան պահպանում է որոշակի հետևողականություն, այսինքն՝ թվարկած խնդիրներից յուրաքանչյուրի առնչությամբ չկան սկզբունքային հակասություններ «Օրագրերում» և գեղարվեստական երկերում: Դրանք նաև այդ իմաստով են լրացնում ու շարունակում միմյանց, բացառությամբ մի էական զանազանության. բանն այն է, որ գեղարվեստական երկերում Կաֆկայի կրոնական գիտակցության դրսևորումները ուղղակի բնույթ չունեն, այլ ներկայանում են գեղարվեստական այլաբանության և ծածկագրության հանդերձանքով: Այս

հանգամանքը ճշգրտում է մտցնում նրա վեպերի և նովելների մեկնաբանության մեջ՝ դրանց սոցիալական, փիլիսոփայական, ինքնակենսագրական և այլ մեկնակետերին ավելացնելով ևս մեկը կրոնականը կամ դիցաբանականը:

Կրոնական գիտակցությունն այնքան է արմատացած Կաֆկայի գեղարվեստական մտածողության մեջ, որ անգամ կենցաղային, առօրյա երևույթների մասին խոսելիս դրանք աստիճանաբար ձեռք են բերում նոր, անսովոր բովանդակություն (օրինակ՝ «Նամակ հորը» անսովոր երկը, որը սովորական, էպիստոլյար փաստաթղթից աստիճանաբար վեր է ածվում գեղարվեստական լուրջ գործի՝ նաև կրոնական բովանդակությամբ): Կաֆկայի վեպերի և պատմվածքների էզոթերիկ իմաստների շարքում անպայմանորեն կա կրոնականը: Այսպես, առանձին մեկնաբանների կարծիքով «Ամերիկա» վեպն արծարծում է դրախտից մարդու արտաքսման առասպելը, «Դատավարությունը»՝ Հոբի բարդույթը, «Դղյակը»՝ Անառակ Որդու վերադարձը: Նման մեկնաբանությունների տրվում են նաև նովելները, պատմվածքները, մանրապատումները: Այս առումով, անկասկած, Կաֆկային կարելի է տեղավորել գաղտնագրության հանճարների՝ Դանթեի, Գյոթեի, Հոֆմանի և նմանատիպ այլ գրողների կողքին:

Կրոնի հետ Կաֆկայի ունեցած առնչությունների քննությունը իր հետ բերում է նաև մեկ այլ խնդիր, որ կապված է նրա գրականության պոետիկայի հետ: Դժվար չէ, օրինակ, Կաֆկայի վերին աստիճանի մշակված, անթերի, բայց և արձանագրային, չոր ու ցամաք ոճի մեջ տեսնել ոչ միայն գրողի անհատական ես-ի գրեթե ամբողջությամբ ոչնչացումը, այլև 20-րդ դարի եվրոպացու հոգևոր աղքատության անժխտելի անդրադարձը: «Կաֆկայի ոճի վարպետությունը, - գրում է Մաքս Բրոդը, - սովորական էսթետիզմ չէ, դա բարոյական դրսևորում է (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.), որ հեղինակի առանձնահատուկ ազնվության ծնունդն է»[10]: Նրա գեղարվեստական տեքստերում չկա ոչ մի բառ, որը չավելացնի նոր գուներանգ կամ լինի բոլորովին անիմաստ: «Յուրաքանչյուր մանրամասն, - շարունակում է Մ. Բրոդը,- շողարձակում է լույս, որը մատնանշում է հավերժականը, այնկողմնայինը, իդեալական աշխարհը»[11]: Կաֆկայի հիմնավոր և վերջնական կողմնորոշումը դեպի հոգևոր մարդը և հոգևոր գրականությունը, դեպի այն գրողները, որոնց ընդունված է անվանել «քահանաներ առանց եկեղեցու» (Հյոլդեռլին, Ֆլոբեր, Տոլստոյ, Կյերկեգոր, Դոստոևսկի) իր ակունքներում ունի միևնույն ազդակը, միևնույն հիմքը: Դա գրականության մասին նրա պատկերացումն է, որում շատ բան հիշեցնում էր ոչ այլ ինչ, քան հենց կրոնական միստիկան:

Կաֆկայի կրոնական գիտակցության համար կարևորագույն են Աստծո, մարդու և նրանց միջև կապի (հավատի) խնդիրները:

1. Աստծո գաղափարը Ֆրանց Կաֆկայի գիտակցության մեջ առնչվում է բացարձակի, կատարյալի գաղափարին, որի գոյությանը նա բնավ չի կասկածում (Կաֆկայի գիտակցությունը հենց բացարձակի գիտակցությունն է, որն արդեն իսկ կրոնական է): Դա նրա մարդկային և ստեղծագործական փորձի եզրահանգումն է: Բացարձակի, մեղքից ազատության և կատարելության մեջ ապրում է այն, ինչ անվանում ենք Աստված: Կաֆկայի վիպական բոլոր գլխավոր հերոս-

ները մղվում են դեպի վերին մի նպատակ ու ատյան, դեպի վիթխարի ու անմատչելի մի գոյություն, ցանկանում են շփվել դրա հետ, տեսնել, զգալ այդ գոյությունը, որն այդպես էլ չի երևում նրանց: «Ո՞ւր է դատավորը, ում Կ-ն այդպես էլ չտեսավ, ո՞ւր է գերագույն դատարանը, որին այդպես էլ չհասավ գործը», - սրանք «Դատավարություն» վեպի վերջին նախադասություններից են: «Դատավարություն» վեպը բովանդակում է մի առակ, որը հաճախ տպագրվում է նաև առանձին իբրև մանրապատում: Այն կրում է «Դատարանի առաջ» վերնագիրը: Մի գյուղացի մոտենում է օրենքի դարպասներին և պահապանից խնդրում ներս մտնելու թույլտվություն: Պահապանը թույլ չի տալիս: Ողջ կյանքը մարդն անցկացնում է օրենքի դարպասների առաջ, հասնում խոր ծերության և ապա մեռնում՝ այդպես էլ չստանալով ներս մտնելու թույլտվություն: Նման իրադրություններ կան նաև «Ամերիկա», «Դղյակը» վեպերում, առանձին պատմվածքներում:

Աստծո և մարդու հանդիպումը չի կայանում ոչ միայն նրա համար, որ Աստված անհասանելի է, այլև մարդն ինքը անսահմանորեն հեռացել է Աստծուց: Այս երևույթը նորություն չէր եվրոպական մտքի համար: Դեռևս 17-րդ դարում Բլեզ Պասկալը գրում էր. «Մեզ (Աստծուն և մարդուն՝ Ա. Ա.) բաժանում է անսահման քառսը»[12]: Կաֆկայի «Չինական պարսպի կառուցման օրերից» նովելում էլի մի առակ կա, որը պատմում է, թե ինչպես է կայսեր (Աստծո) սուրհանդակը մոլորվում ճանապարհին և չի կարողանում հասնել մարդուն, քանզի նա անցնում է անսահման բազմության միջով. «Եթե ազատ լիներ ճանապարհը, նա կթռչեր ուղիղ դեպի քեզ, և դու շուտով կլսեիր, թե ինչպես է արդեն բախում քո դուռը... բայց նա դեռևս պալատի ներսի սենյակներում է, որտեղից ուզում է դուրս գալ... Եթե նույնիսկ նրան այդ բանը հաջողվի այնտեղ, ապա միևնույն է ոչնչի չի հասնի, քանի որ հետո պետք է անցնի աստիճանների վրա կանգնած բազմության միջով: Եթե նույնիսկ այդ էլ հաջողվի, ապա միևնույն է ոչնչի չի հասնի, քանի որ հետո պետք է անցնի պալատի բակերը, իսկ բակերից հետո գալիս է դրսի շրջափակ պալատը: Եվ կրկին աստիճաններ ու բակեր, և կրկին մի պալատ ու այդպես հազարամյակներ շարունակ: Եվ եթե անգամ նրան հաջողվի բախել պալատների վերջին դուռը, թեև դա երբեք ու երբեք չի կարող լինել, այս անգամ էլ նրա առաջ կհայտնվի ողջ աթոռանիստ քաղաքը, աշխարհի կենտրոնը՝ ծայրեծայր լցված հպատակներով: Ոչ ոք այդ բազմությունը կտրել անցնել չի կարող, նույնիսկ մահամերձի մասին լուրը տանողը: Իսկ դու նստած ես պատուհանիդ մոտ և իրիկնաժամի երազանքներիդ մեջ ընկած՝ մտածում ես կայսերական լուրի մասին»:

2. Աստծո, կատարյալի, բացարձակի հետ միասին իմացաբանական քննության ոլորտ է ներքաշվում նաև Մարդը: Ոչ իր բանականությամբ, այլ իր գոյության հիմքերով մարդը կապված է Աստծո հետ: Բայց Կաֆկայի մարդը երկակի բնույթ ունի: Նա օժտված է բանականության կայծով, որով կարող է կանգնել (վերադառնալ) ճշմարիտ ճանապարհի վրա: Այդուհանդերձ դա նաև մեղավոր մարդն է, թույլ, անկամ, անկատար մարդը, որն անվերջ սխալներ է թույլ տալիս և խոտորվում ճշմարիտ ճանապարհից: Այս գիտակցությունը ծանոթ էր նաև «Ֆաուստին». «Մարդը միշտ էլ կսխալվի/Երբ ձգտումներ կան հիրավի» (Գյոթե, «Ֆաուստ», Ա-

ռաջին մաս, Նախաբան երկնքում): Երկատված մարդու մասին է խոսում Բլեզ Պասկալը, ըստ որի մարդը՝ մտածող եղեգնը, արարած է՝ լի բնական մոլորություններով, որոնք անուղղելի են առանց շնորհի: Բլեզ Պասկալը դա ձևակերպում է այսպես. «Մարդու թշվառությունն առանց Աստծո: Մարդու երանությունը, երբ Աստծո հետ է»[13]: Մոտավորապես նույն միտքը գտնում ենք մեկ այլ խորհրդածության մեջ. «Եթե մարդը ստեղծված չէ Աստծո համար, ապա ինչո՞ւ է երջանիկ միայն Աստծո մեջ: Եթե մարդը ստեղծված է Աստծո համար, ապա ինչո՞ւ է այդքան ներհակ Աստծուն»[14]: Սխալները մարդուն անընդհատ վերադարձնում են իմացաբանական ճանապարհի սկզբին և միևնույն խնդիրներին:

Սխալվող մարդը Կաֆկայի գիտակցության մեջ առաջ է բերում երկակի վերաբերմունք: Առաջինը կարեկցանքն է, երկրորդը՝ հուսահատությունը:

Աստծո և մարդու առնչություններում Կաֆկան մշտապես կանգնած է մարդու կողքին, ոչ Աստծո: Կարեկցանքի (խղճի) պարագան, առհասարակ, ընդհանրական է Կաֆկայի մտածողության համար և գրեթե մշտապես համարժեք սեր հասկացությանը: Ավելին, կարեկցանքին, որի ակունքները նույնպես Կյերկեգորի կրոնական փիլիսոփայության մեջ են, Կաֆկան նայում է իբրև օտարացող մարդկանց միջավայրում բացակա լույսի: Վերստին հիշենք «Դատավարության» տողերը: Մորթվելու տարվող Յոզեֆ Կ-ն հանկարծակի ուժգնորեն զգում է մարդկանց օգնության կարիքը. «Պատուհաններից մեկից կարծես լույս ժայթքեց. փեղկերը ետ գնացին, հեռու՝ վերևում, թույլ ու հազիվ երևացող մի մարդ թափով առաջ կախվեց և ավելի առաջ պարզեց ձեռքերը: Ո՞վ էր նա: Բարեկա՞մ, բարի մա՞րդ, կարեկցո՞ւմ էր: Այդ մարդն օգնե՞լ էր ուզում: Մի՞ մարդ էր, թե բոլորն էին: Դեռ հնարավո՞ր էր օգնել: Մոռացության մատնված փաստարկնե՞ր կային»: «Դատավարության» (և ոչ միայն «Դատավարության») էջերը կարող էին գրվել մարդու կողմից, ով կյանքին և մարդուն սիրահարված է հենց հուսահատորեն:

Երկրորդը, ինչպես նշվեց, հուսահատությունն է (հարակից բոլոր դրսևորումներով՝ կենսաբանական վախից մինչև հեգնանք), որ ծնվում է ոչ այնքան Աստծո անհասանելիությունից, որքան մարդու անկատարությունից: Սա ինչպես հավիտենական մարդն է (Կաֆկան մարդու մասին դատում և մտածում է ընդհանրական, հավիտենական կատեգորիաներով), այնպես էլ ժամանակակից՝ քսաներորդ դարի մարդը, որի կացության ողբերգականությունը ոչ ոք այնքան խորը և ճշմարտացի չէր զգում, որքան Կաֆկան: «Դատավարություն» վեպը ծաղր է մարդկային (աստվածային) արդարադատության հասցեին: «Պատժիչ գաղութում» նովելում երևում է հասարակության կողմից մարդու ոչնչացման դրաման: Գրեթե նույն պատկերն է «Քաղց պահող մարդը» նովելում: «Կերպարանափոխություն» նովելի հերոսը (շրջիկ գործակալ Գրիգոր Զամզան) վերածվում է ուտիճի: Կաֆկայի նովելների հերոսներ են դառնում շունը «Շան հետազոտություններ», մուկը՝ «Ժոզեֆինա կամ մկնային ցեղ», կապիկը «Հաշվետվություն ակադեմիային» և այսպես շարունակ: Սարսափի և մղձավանջի պատկերները Կաֆկայի գրականության անբաժանելի մասն են; Թվում է՝ այս ամենը կապ չունի Աստծո և աստվածայինի, Կաֆկայի հոգևոր մաքուր մղումների հետ: Սակայն

միայն առաջին հայացքից: Իրականում Կաֆկան ներկայացնում է մարդու և հասարակության մի պատկեր, որի հոգևոր ամայության և անկման մասին, իբրև պատմական իրողություն, խոսում են շատերը: Այն պահից սկսած, երբ Ֆր. Նիցշեն հայտարարեց Աստծո մեռած լինելու մասին, ավելի ու ավելի է մեծանում թիվը օտարացման մասին խոսող այն հեղինակների, ովքեր դրա հիմքում դնում էին հենց օտարացումը Աստծուց: Կաֆկան դրանցից մեկն էր: Աստծո և հավատի բացակայությունը Կաֆկայի հերոսներին ոչ միայն վերածում է ամենուրեք ոչնչացող, անէացող, պարտվող, այլև ընդվզումից, ըմբոստությունից հուսահատ կերպարների: Սրանք լուռ, իրենց ճակատագրի դատավճիռն այլևս ընդունած և հնազանդորեն տապալվող մարդիկ են (հետագայում բնավորության այս գիծն անցավ Քամյուի հերոսներին): Կաֆկայի հերոսները մարդիկ են, ովքեր այլևս չեն կարող տանել կեցության ծանրությունը, քանզի նրանք կտրվել են իրենց արմատներից և ոտքերի տակ կորցրել կյանքի միասնականության հիմքերը:

Ֆրանց Կաֆկայի գրականությունը համոզիչ փաստաթուղթ է այն մասին, թե ինչպես առանց Աստծո հասարակությունը կարող է վերածվել անմարդկային հասարակության: Գրողը լայնորեն խոսում է մեղավոր մարդու կամ մարդկային մեղքի մասին: Այս թեման, թերևս, նրա գրական ժառանգության առանցքային խնդիրներից է: Աֆորիզմներում այսպիսի բազմաթիվ դատողություններ կան: Երրորդ աֆորիզմում Կաֆկան խոսում է մարդկային երկու մեղքերի՝ անհամբերության և անփութության մասին, որոնցից առաջինի հետևանքով նրանք նախ վտարվել են դրախտից, իսկ երկրորդի հետևանքով չեն կարողանում վերադառնալ այնտեղ: Չափազանց էական է, սակայն 83-րդ աֆորիզմը. «Մենք մեղապարտ ենք ոչ միայն նրա համար, որ ճաշակել ենք իմացության ծառից, այլև նրա, որ առայժմ չենք ճաշակել կյանքի ծառից: Ամոթալի է այն կացությունը, որում կանք՝ անկախ մեղքից»:

Մեղքի, մեղավոր մարդու խնդրի ամենահիմնավոր արծարծումը գտնում ենք «Դատավարություն» վեպում: Հետաքրքիր է, որ վեպի մեկնակետերից մեկի համաձայն դա մի դատավարություն է, որ Կաֆկան բացում է հենց իր՝ Կաֆկայի դեմ, այսինքն՝ մեղավոր մարդկության պատմությունը Կաֆկան սկսում է նախ և առաջ իրենից՝ իբրև անկատար գոյություն: Այս առումով Հոբի գիրքը (ուստի նաև «Ֆաուստը») և «Դատավարությունը» մի շարքում են: Հոբի գիրքը պարունակում է հարցադրումներ, որոնք այդպես էլ ոչ մի պատասխան չեն ստանում: Գիրքը ոչ միայն չի հաշտեցնում Աստծուն և մարդուն, այլ ավելի խորացնում է նրանց միջև ընկած վիհը: Աստվածայինի և մարդկայինի չափումները տարբեր են և Աստված այլ բան չէ, քան մարդկայինից, բարուց և չարից անդին մի գոյություն: Հոբը հաշտվում է հողմի միջից խոսող և զայրացած Աստծո հետ, քանզի հասնում է իր հիմնական նպատակին, իսկ Կաֆկան՝ ոչ: Մի կողմից նա իրեն ազատում է կյանքի և մահվան հիմնախնդիրները քննելու ծանրությունից («Կան հարցեր, որոնց կողքով մենք էինք կարող անցնել, եթե բնությամբ ազատված չլինեինք դրանցից», Աֆորիզմներ, 56), մյուս կողմից սակայն նրա գիտակցությունը անվերջ ու անընդհատ պտտվում է աստվածայինի, այնկողմնայինի սահմանների շուրջ, փորձում անցնել սահմանը (հիշենք վերը մեջբերված օրագրային գրառումը՝ «Այս ամբողջ

գրականությունը հարձակում է սահմանի վրա»), ապրել իրավիճակներ, որոնք ոչ այն է՝ հիշեցնում են կյանք, ոչ այն է մահ: Կյանքի և մահվան միջակայքում գտնվելը Կաֆկային և նրա հերոսներին չափազանց բնորոշ իրավիճակ է: Դա նշանակում է ներխուժել աստվածայինի տարածք և զգալ, հասկանալ իմաստներ, որոնք սովորական պայմաններում կլինեին անհասկանալի: Աստծո, այսինքն՝ իմացության համար փակ տարածքներ ներխուժել փորձող Կաֆկային պատշաճում է թերևս մեռնող Լիր արքայի խոսքը՝ ուղղված մեռնող դստերը՝ Կորդելիային. «Կմեկնաբանենք գաղտնիքն իրերի/ Կարծես թե Աստծո լրտեսներ լինենք» (Արարված 5, տեսարան 3): Կաֆկայի բազմաթիվ պատմվածքներ, այդ թվում նաև կենդանական (animal) բովանդակություն ունեցողները, կարող են մեկնաբանվել նաև այս հայեցակետով՝ իբրև ներխուժում աստվածայինի, անբնականի, խորհրդավորի տարածք, որտեղ վերջանում են սովորական չափումները, դադարում են գործել բանականության օրենքները, և սկսվում է գրոտեսկը («Խաչասերվածը», «Հաշվետվություն ակադեմիային», «Որջը», «Կամուրջը», «Գյուղական ուսուցիչը», «Որսորդ Գրակքոսը» և այլն): «Կամուրջը» մանրապատումում, օրինակ, այսպիսի տողեր կան. «Ես սառն էի ու ձիգ, ես կամուրջ էի՝ ընկած լեռնային անդունդներից մեկի վրա: Այս կողմում հողի մեջ էի խրել ոտքերիս մատները, այն կողմում՝ ձեռքերիս և այդպես ամուր՝ ձեռք ու ոտքով կառչել մնացել էի փխրուն կավահողին կպած»: Լավագույնը, սակայն, «Որսորդ Գրակքոսը» պատմվածքն է: Սա պատմում է մի մարդու մասին, որը ոչ մեռած է, ոչ կենդանի և գտնվում է գոյության սահմանների միջակայքում. «Շատ տարիներ առաջ... Շվարցվալդում, որը Գերմանիայում է, ես ցած ընկա մի ժայռից, երբ հետապնդում էի եղջերուին... իմ մահվան մակույկը փոքր-ինչ շեղվել է իր ընթացքից... Ես հավիտյանս հավիտենից դատապարտված եմ այն մեծ սանդուղքի վրա լինելու, որը տանում է այն աշխարհ... Սանդուղքով արագ վեր եմ բարձրանում, և թվում է՝ վերևում արդեն երևում է դարպասը, բայց մի ակնթարթ հետո ես կրկին արթնանում եմ իմ հին մակույկի մեջ, որ կանգնած է ինչ-որ տեղ, երկրային ինչ-որ ջրերում»[15]:

Պատմվածքում առկա են նաև ծածկագրական տարրեր: Այսպես, լատիներեն graculus նշանակում է արջնագռավ, գերմաներեն՝ Dohle: Սա հենց Կաֆկայի հայրական ձեռնարկության խորհրդանիշն էր, էմբլեմը, որ չեխերեն թարգմանաբար նշանակում է kavka:

Մահվան և կյանքի միջակայքում գտնվելը Կաֆկայի հերոսներին և միջավայրին հաղորդում է կիսաերազային բնույթ: Անդրաշխարհում հայտնվելը անհնար է առանց ցնցումի, առանց ցատկի, որ մարդուն կարող է դուրս մղել, կտրել այս աշխարհի սահմաններից, գոյաբանական մի հարթությունից տեղափոխել մեկ այլ հարթություն: Մետաֆիզիկ, իռացիոնալ այդ ցատկի մասին խոսում են Լեսսինգը[16], Կյերկեգորը[17] :

3. Վերջապես, Կաֆկայի կրոնական գիտակցության, այսպես կոչված Theologie-ի համար Աստծո էությունից և մարդուց հետո երրորդ կարևորագույն հիմնախնդիրը Աստծո և մարդու միջև կապն է, հաղորդակցությունը: Այս խնդիրը կարևորագույնն է Հոբի գրքում: Հոբին հետաքրքրում է ոչ այնքան իր վիճակը, որքան Աստծո հետ

շփման հնարավորությունն ու դրա բերած երանությունը. «Ես Քո մասին լսել եմ ականջով/ Այժմ աչքերով տեսնում եմ Քեզ...» (Հոբի գիրք, 42, 5): Այս խնդիրը կարևորագույն էր և Կյերկեգորի համար: Ինչպես հայտնի է, Կյերկեգորը անհատի համար սահմանում էր գոյության երեք ոլորտներ՝ գեղագիտական, բարոյական և հոգևոր: Վերջինը բարձրագույն ոլորտն է անհատի գոյության: Հոգևոր ոլորտում անհատը դրսևորվում է ոչ այլ կերպ, քան Աստծո հետ կապի միջոցով: Սակայն այս կապը պարադոքսալ է, հակասական: Մի կողմից սերը առ Աստված հոգևոր մարդուն մղում է նմանվել նրան, մյուս կողմից իր և Աստծո միջև առկա բացարձակ զանազանությունը հոգևոր մարդուն դարձնում է Աստծո հակոտնյան: Այդուամենայնիվ, Կյերկեգորը մարդու գոյութենական հիմքերից մեկը համարում է հենց պարադոքսալ հավատը, անհատի հոգևոր պաթոսը առ աբսուրդը, անհեթեթը[18]: Ֆր. Նիցշեն ևս կարևորում էր անհատի և Աստծո կապի խնդիրը: Ավելին, Աստծո անկման պատճառը Նիցշեի կարծիքով այն է, որ նա այլևս լսելի Աստված չէ. «...Նա (Աստված՝ Ա. Ա.) չի լսում և եթե լսեր էլ, համենայն դեպս չէր կարողանա օգնել: Ամենավատը՝ նա ասես անընդունակ է հստակ հաղորդվելու. նա մթագնե՞լ է, ինչ է»[19]:

Թե Կյերկեգորը, թե Նիցշեն համարվում են Կաֆկայի հոգևոր ուսուցիչները: Կաֆկայի գրականությունը ընդհանրության եզրեր է դրսևորում երկու խոշոր մտածողների հետ էլ հավասարապես: Բայց եթե սարսափի, մղձավանջի պատկերների մեջ երևում է Նիցշեի՝ անաստված փիլիսոփայի դեմքը, ապա ժամանակակից մարդու գոյության որոնումներում Կաֆկան շատ ավելի մոտ կանգնած է Կյերկեգորին:

Վերջինիս պես Կաֆկան ևս արձանագրում է. «Կա նպատակ, բայց չկա ճանապարհ. այն, ինչ անվանել ենք ճանապարհ, հապաղումն է» (Աֆորիզմներ, 26): Այդուամենայնիվ, որքան էլ անհաղթահարելի է իրականությունը, որքան էլ ահագնալի ու ոչնչացնող է կյանքը, Կաֆկան բոլորովին չի փակում մարդու հոգևոր աչքը, Աստծո և մարդու միջև երկխոսության դռները չի գոցում ընդմիշտ, այլ դրանք թողնում է կիսաբաց. «Մարդը չի կարող ապրել առանց մշտական հավատի իր ներսում ինչ-որ Անխախտ բանի հանդեպ, ընդ որում այդ Անխախտը և այդ հավատը նրա համար կարող են մնալ գաղտնի: Գաղտնիության արտահայտություններից մեկն էլ հավատն է անձնական Աստծո հանդեպ» (Աֆորիզմներ, 50): Այսինքն՝ օտարացման ժամանակները ծնում են և օտարացման աստվածներ, որը, թերևս, ավելի լավ է, քան ոչ մի աստված:

Պարադոքսների շարքից ահա ևս մեկը, որտեղ մարդկային երջանկության դուռը, նախորդի պես, ոչ գոցվում է, ոչ էլ բացվում ամբողջությամբ, այլ մնում է կիսաբաց. «Տեսականորեն հնարավոր է կատարյալ երջանկություն. քո ներսում հավատալ ինչ-որ Անխախտ բանի և չձգտել դեպի նա» (Աֆորիզմներ, 69):

Նպատակի (Աստծո) անառարկելի գոյությունը, բայց պնսահման հեռավորությունը, միաժամանակ չարի (սատանայի) մերձավորությունը մարդկային գոյության ընթացքը դեպի նպատակը դարձնում է հավիտենական, որ հավասարազոր է անշարժության, ինչպես Աքիլլեսի վազքը, ինչպես Սիզիփոսի ճիգը: Մեղքի, դատաստանի, մերձավորին սիրելու և կարեկցանքի անհրաժեշտության մասին խոսող Կաֆկան իր հերոսներին (նաև իրեն) անընդհատ դնում է Աստծուն ո-

ոնելու ճանապարհներին՝ նախապես համոզված լինելով իր հերոսների (նաև իր) դատապարտվածությանը: Կաֆկա-գրողի և Կաֆկա-մտածողի համար այս անվախճան ընթացքը արդարացված է ինչպես անցած (պատմականության), այնպես էլ անցնելիք (ապագայի) ճանապարհի տեսանկյունից: Պատահական չէ, որ 20-րդ դարակեսի եվրոպական սարսափներից հետո հատկապես խիստ բարձրացավ Կաֆկա-մտածողի արժեքն իբրև մարգարե:

ՇԱԼՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Макс Брод, Франц Кафка: Узник абсолюта; Москва; 2003, стр. 184.
2. К. Ясперс, Смысль и назначение истории, М. 1991, стр. 293.
3. Ֆր. Նիցշե, Բարուց և չարից անդին, Երևան, 1992, էջ 45:
4. М. Бахтин, Эстетика словесного творчества; М., 1986, стр. 134.
5. В. Набоков, Лекции по зарубежной литературе, М., 2000, стр. 330.
6. Fr. Beißner, Der Schacht von Babel, Stuttgart, 1963, s. 12.
7. Հետաքրքիր է, որ այս միտքը, գրեթե նույն նշանակությամբ, գտնում ենք նաև Գրիգոր Նարեկացու «Մատյանում»: Բան Դ-ի Ա հատվածում Նարեկացին խոսում է Աստծո դատաստանի՝ «պատերազմի օրվա» մասին, երբ միջոց չի լինելու ոչ պաշտպանվելու և ոչ էլ խոսքով արդարանալու, «Զի ծածկվածները մերկ են քեզ համար...», - դիմելով Աստծուն՝ ասում է բանաստեղծը: Այսինքն՝ Կաֆկան արդեն իսկ մերկ էր իր բացառիկ անկեղծությամբ՝ Աստծո առաջ կանգնելու համար:

Առհասարակ, Կաֆկայի մտածողության ոչ քիչ կողմեր շատ մոտ են միջնադարյան հայ հանճարին, հատկապես այնպիսիք, որոնք վերաբերում են մարդու ընկալմանը: Այսպես, Կաֆկան իրեն տանում է ինքնադատաստանի նույն ճանապարհով, որով անցնում է և Նարեկացին: Նարեկացու բերանով Կաֆկան ևս կարող էր ասել. «...կողոպտված է գանձն ստեղծողի.../ Տիրոջ պարգևը տրված է քամուն»:

8. Բ. Պասկալ, Մտքեր, Երևան, 2003, էջ 105:
9. Макс Брод, Франц Кафка: Узник абсолюта; Москва; 2003, стр. 213.
10. Նույն տեղում, էջ 213
11. G. Janouch, Gespräche mit Kafka, Fisher Verlag, 1968, s. 102.
12. Բ. Պասկալ, Մտքեր, էջ 397:
13. Նույն տեղում, էջ 4:
14. Նույն տեղում, էջ 378:
15. Կրկին կարելի է զուգահեռներ տեսնել Կաֆկայի և դասականների միջև: Դժոխքում հանդիպելով եղբայր Ալբերիգոյին՝ Դանթեն զարմացած հարցնում է. «Ի՞նչ, - ասացի, - դու մահացած չե՞ս իրավ», և ստանում հետևյալ պատասխանը. «...Դեռ ոչ, և ես չգիտեմ/ Թե աշխարհում իմ մարմինը ինչ եղավ» (Դժոխք, 33, էջ 121):
16. G. E. Lessing, Über den Beweis des Geistes und der Kraft.
17. S. Kierkegaard, Nachschrift zu der Philosopischen Brücken, I.
18. Կարելի է սա ընդհանրության մեջ տեսնել 2-3-րդ դարերի քրիստոնեական աստվածաբան և գրող Տերտուլիանոսի հայտնի ասացվածքի հետ՝ «Credibile est quia inptum» լատ. բառացի՝ հավատալու արժանի է, քանզի անհեթեթ է:
19. Ֆր. Նիցշե, Բարուց և չարից անդին, Երևան, 1992, էջ 50: